նած է և Հերակլ կայսեր [1] հրամանով նորոգուած և ուր Հայոց հեթանոսական մեծ տօներն կը կատարուէին։

Նպատ Դաշլի չայի և Դիատինի միջավայրը, երկուքից ևս 3-ական ժամ հեռու կը գտնուի։

Սուկաւէտ։—Հանդէպ Նպատայ՝ յարևմուտս հիւսիս [2], Ալաշկերտի դաշտի արևմտեան հիւսիսային եզրից քիչ բարձր, Մօլլա-Միւլէյման գիւղի մօտ՝ Զաթայ և Ղօփուզայ ջրի միջավայրն, Ջրարաշխ լեռներու շարքին մէջ կանգնած են մեծ և փոքր Սուկաւէտներն։

Փոքր Սուկաւէտը մեծին հարաւն է, կարճ շղթայով մի իրար միացած են։ Փոքրի ի հարաւ յարևելս հակեալ լանջի վերայ, մերձ ստորոտին, կայ Ս. Սուքիասեանց սրբավայրն [3], այս սրբավայրից բարձր երկու լերինքս ևս զուրկ են բուսականութիւնից. միայն մեծ Սուկաւէտի արևմտեան հարաւային երեսին վերայ Ջեոտըկան գիւղից կը տեսնուի մի ձորակ, որոյ երկու կողերն պարզ կերևին փոքրիկ անտառակներ, որք անմատչելի են։

Մէարգամիր կամ Մէրկեմիրն Խալեազի հարաւ արևմուտքն գտնուած մեծ լեռն է, որ կայ Խնուսայ ի հիւսիս արևելեան սահմանի վերայ, բարձր, գագաթը տափարակ և խոտաւէտ նաև ջրաւէտ է, ուր կը զետեղուին յամրան 7—800 տուն վրանաբնակ քրդեր, ուր կան գեղեցկագոյն մարգագետիններ, առատ և յստակ

---

1. Վանքը, որոյ հիանալի շինութիւնը, հնութիւնները, արձանագրութիւնները գրից գեղեցկութիւնը առանձին նկարագրութեան կարօտ է։

2 Իրարմէ 16—17 ժամ հեռի։ 3. Ս. Սուքիասեանց սրբավայրի վերան նաև պիտի գրեմ ըստ կարգին։ 4. Լա միանգամից պիտի հնչուի արբ. Ը ին տառի հնչման նման։